# ԱՄԱՆՈՐԻ ԵՎ Ս. ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա-Ի ՊԱՏԳԱՄՆԵՐԸ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅԱՆ, ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՀԱՓԱՌԻ ԱՆՈՒՆՈՎ ՍՏԱՑՎԱԾ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐԸ

## ԹՅՈՒՐՔԻՈ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿ. ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Շնորհոք Քրիստոսի Ծննդյան մեծ և սքանչելի խորհրդի, Միածնաէջ Մայր Տաճարեն սիրո ողջույն և օրհնություն հայրապետական՝ Ձերդ Ամենապատվության, հոգևոր դասուն, եկեղեցական, բարեսիրական կազմակերպությանց և համայն մեր հավատացյալ ժողովրդյան:

Ջերմապես կմաղթենք բոլորիդ արևշատություն ու երջանիկ կյանք ընտանեկան հարկերու տակ, նաև ուժ ու եռանդ և աստվածային օգնություն՝ Ձեր աշխատանքը առավել ևս պտղաբեր դարձնելու համար ի հաստատություն Ս. Եկեղեցվո և ի բարօրություն և միություն հայ ժողովրդյան:

Տիրավանդ խաղաղությունն ու հաճությունն ի մարդիկ թող առատապես իջնեն աշխարհի վրա, որպես ցող երկնային բարերար ողորմության:

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

---

## ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԽՈՐԵՆ ԵՊԻՍԿ. ԲԱՐՈՅԱՆԻՆ

ԱՆԹԻԼԻԱՍ

Շնորհոք Քրիստոսի Ծննդյան մեծ և սքանչելի խորհրդի, Միածնաէջ Մայր Տաճարեն սիրո ողջույն և օրհնություն հայրապետական՝ Ձերդ Ամենապատվության, Ս. Աթոռույդ միաբանության և համայն մեր հավատացյալ ժողովրդյան:

Ջերմապես կմաղթենք բոլորիդ արևշատություն, ուժ և եռանդ և աստվածային օրհնություն՝ Ձեր աշխատանքը առավել ևս պտղաբեր դարձնելու համար ի հաստատություն մեր Ս. Եկեղեցվո և ի բարօրություն և միություն հայ ժողովրդյան:

Տիրավանդ խաղաղությունն ու հաճությունն ի մարդիկ թող առատապես իջնեն աշխարհի վրա, որպես ցող երկնային բարերար ողորմության:

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

---

## ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿ. ՏԵՐՏԵՐՅԱՆԻՆ

ԵՐՈՒՍԱՂԵՄ

Առթիվ Քրիստոսի Ծննդյան մեծ և սքանչելի խորհրդի, Միածնաէջ Մայր Տաճարից սիրո ողջույն և օրհնության հայրապետական՝ Ձերդ Ամենապատվության, Սրբոց Հակոբյանց միաբանության և համայն մեր հավատացյալ ժողովրդյան:

Ջերմապես խնդրենք բարձրից արեշատություն, ուժ և եռանդ և աստվածային օրհնություն՝ Ձեր աշխատանքը առավել ևս պտղաբեր դարձնելու համար ի հաստատություն մեր Ս. Եկեղեցու և ի բարօրություն և միություն հայ ժողովրդյան:

Տիեզերական խաղաղությունն ու հաճությունն ի մարդիկ թող առատապես իջնեն աշխարհի վրա, որպես գործ Երկնային բարերար ողորմության:

ՎԱԶԳԵՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

## ԹՅՈՒՐՔԻՈ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿ. ԽԱՉԱՏՐՅԱՆԻՑ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻՑ

Ամանորի և Ս. Ծննդյան առիթով ընդունեցեք բոլորիս սրտագին շնորհավորանքն ու մաղթանքը, Աստուծո օրհնությամբ և Բեթղեհեմի աստղին առաջնորդությամբ. Հայ Եկեղեցու և Մայր Աթոռի հաստատուն շինության, պայծառության. միջեկեղեցական Քրիստոսատուր սիրո ստեղծման, համայն ազգաց հոգևոր վերածննդյան, աշխարհի անգին խաղաղության և Վեհիդ Քաջառողջությամբ արեշատության և առաջադրած եկեղեցական ձեռնարկներու հաջողության համար:

ՊԱՏՐԻԱՐՔ ԹՅՈՒՐՔԻՈ ՀԱՅՈՑ՝
ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

## ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԽՈՐԵՆ ԵՊԻՍԿ. ԲԱՐՈՅԱՆԻՑ

ԱՆԹԻԼԻԱՍԻՑ

Նոր տարվան և Ս. Ծննդյան առթիվ Ձերդ Վեհափառության կներկայացնենք մեր և միաբանության և ժողովրդյան սրտագին շնորհավորությունները և բարգավաճում կմաղթենք Մայր Աթոռին:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ՝
ԽՈՐԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱՐՈՅԱՆ

## ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿ. ՏԵՐՏԵՐՅԱՆԻՑ

ԵՐՈՒՍԱՂԵՄԻՑ

Նոր տարվա և Ս. Ծննդյան տոների առթիվ Ձերդ Ս. Օծության և Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներին ներկայացնում ենք մեր հարգալից և սրտագին շնորհավորությունները: Աղոթում ենք Ամենակարողին, որ հաջողություն պարգևի մեր փառայանձն Եկեղեցու մեծ ձեռնարկումներին՝ Ձերդ Ս. Օծության իմաստուն առաջնորդության ներքո:

ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ՝
ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆ